ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/160

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.11.2018թ. թիվ 27/26-3/20057-18 գրությամբ «Ավանգարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 01.10.2018թ. թիվ ԴՎԱ/3702 գրության հիման վրա, 05.11.2018թ. «Ավանգարդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.10.2018թ. թիվ ԴՎԱ/3702 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում գնահատող հանձնաժողովի կողմից «Ավանգարդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից: 14.08.2018թ. «Ավանգարդ» ՍՊԸ-ին armeps.am համակարգի միջոցով ծանուցում է ուղարկվել պայմանագիր կնքելու վերաբերյալ, սակայն 15.08.2018թ. մասնակիցը ներկայացրել է գրություն, համաձայն որի հրաժարվել է պայմանագիր կնքելուց:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ Գագիկ Ուստյանը:

<u>3. «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 05.11.2018թ. գրությամբ դիմել է «Ավանգարդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.11.2018թ. թիվ 27/26-3/20057-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ավանգարդ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Կարեն Առաքելյանը:

<u>4. ՍՑ-ԷՍ-2018/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 05.11.2018թ. թիվ 27/26-3/20057-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.10.2018թ. թիվ ԴՎԱ/3702 գրությունը և կից փաստաթղթերը, «Ավանգարդ» ՍՊԸ-ի

կողմից 15.08.2018թ. ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված գրությունը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 21.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 07.06.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 և 21.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 հավելված գնման ժամանակացույցով՝ լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 6կգ. ավտոմատ) ապրանքատեսակի մատակարարման համար ժամկետ է սահմանված եղել՝ 100 հատ հուլիս ամսում, 150 հատ օգոստոս ամսում, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 10կգ. ավտոմատ)՝ 100 հատ հուլիս ամսում, 100 հատ օգոստոս ամսում:

Հանձնաժողովը՝

- 21.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով որոշել է «Ավանգարդ» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:
- 07.06.2018թ ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետով որոշել է «Ավանգարդ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.07.2018թ. armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «Ավանգարդ» ՍՊԸ-ին ծանուցում է ուղարկել պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ներկայացված՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38-1 ծածկագրով պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված գնման ժամանակացույցով, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 6կգ. ավտոմատ) ապրանքատեսակի մատակարարման համար ժամկետը սահմանված է

եղել՝ 250 հատ օգոստոս ամսում, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 10կգ. ավտոմատ) ապրանքատեսակի համար՝ 200 հատ օգոստոս ամսում:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն 31.07.2018թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38-1 ծածկագրով լվացքի մեքենաների ձեռքբերման համար կազմակերպված ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

Մրցույթի հրավերի պայմանագրի նախագծում՝ 100 հատ 6 կիլոգրամանոց և 100 հատ 10 կիլոգրամանոց լվացքի մեքենաների մատակարարման ժամկետ է սահմանված եղել 2018թ. հուլիս ամիսը, սակայն 25.07.2018թ. ծանուցում ենք ստացել պայմանագիր կնքելու մասին, որում լվացքի մեքենաների մատակարարման ժամկետ է սահմանված՝ 2018թ. օգոստոս ամիսը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Կատարվել է պայմանագրի ժամանակցույցի փոփոխություն, նշանակում է, որ փոխվել է գնման առարկայի բնութագիրը, այդ թվում փոխվել է նաև պայմանագրի էական պայմաններ: Նման պարագայում, նույնիսկ մեր համաձայնության դեպքում, պայմանագրի կնքումը կհանդիսանար «Գնումների մասին» ՀՀ օրենքի խախտում:

Ելենոլով վերոգրյալից հայտնում եմ, որ մեր կազմակերպությունը անընդունելի է համարում նշված պայմանագրի կնքումը:»:

Հանձնաժողովը 23.07.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ քաղաքացի Արսեն Անտանոսյանի կողմից

13.06.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որով քաղաքացի Արսեն Անտանոսյանը խնդրել է դադարեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ և 07.06.2018թ ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացած որոշումները: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մերժել է ներկայացված բողոքը:

Հանձնաժողովը քննարկելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/81 որոշումը, որոշել է՝ 21.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ և 07.06.2018թ ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացած բոլոր որոշումները թողնել անփոփոխ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.08.2018թ. armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «Ավանգարդ» ՍՊԸ-ին ծանուցում է ուղարկել պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ներկայացված՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38-1 ծածկագրով պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված գնման ժամանակացույցով, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 6կգ. ավտոմատ) ապրանքատեսակի մատակարարման համար ժամկետը սահմանված է եղել՝ 250 հատ սեպտեմբեր ամսում, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 10կգ. ավտոմատ) ապրանքատեսակի համար՝ 200 հատ հոկտեմբեր ամսում:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն 15.08.2018թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 31.07.2018թ. գրությամբ հայտնել ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում մեր կազմակերպությանը առաջարկվել է կնքել պայմանագիր, որտեղ կատարվել է պայմանագրի ժամանակացույցի փոփոխություն, նշանակում է, որ փոփոխվել է նաև գնման առարկայի բնութագիրը, այդ թվում փոխվել են պայմանագրի էական պայմանները: Նման պարագայում, նույնիսկ մեր համաձայնության դեպքում, պայմանագրի կնքումը կհասնդիսանար «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 36-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 14.08.2018թ. ստացել ենք ծանուցում այն մասին, որ կրկին մեզ առաջարկվում է կնքել վերոհիշյալ պայմանագիրը՝ կրկին

փոփոխված ժամանակացույցով, ըստ որի 250 հատ 6 կիլոգրամանոց լվացքի մեքենաների մատակարարման ժամկետ է սահմանված 2018թ. սեպտեմբեր ամիսը, իսկ 200 հատ 10 կիլոգրամանոց լվացքի մեքենաների համար՝ 2018թ. հոկտեմբեր ամիսը:

Հայտնում ենք, որ վերոհիշյալ փոփոխությունը նույնպես հանդիսանում է գման առարկայի բնութագրի փոփոխություն, փոխվել են պայմանագրի էական պայմանները, ուստի մեր կազմակերպությունը պայմանագրի նախագծում կատարված կամ առաջարկվող փոփոխություններով անընդունելի է համարում նշված պայմանագրի կնքումը, քանի որ կնքման պայմանագրում կխախտվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 36-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:»:

Հանձնաժողովը 21.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից 21.08.2018թ. թիվ 1586 գրության համաձայն՝ Ընկերությունը հրաժարվել է պայմանագրի կնքումից, ուստի մասնակցի հայտը մերժվել է և վերջինս զրկվել է պայմանագիրը կնքելուց:

Ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթի հրավերի գնման ժամանակացույցով սահմանված է եղել, որ 6 կիլոգրամանոց լվացքի մեքենաների 100 հատը պետք է մատակարարվեն 2018թ. հուլիս ամսում, իսկ 150 հատը՝ օգոստոս, 10 կիլոգրամանոց լվացքի մեքենաների 100 հատը՝ 2018թ. հուլիս ամսում, իսկ 100 հատը՝ օգոստոս: Սակայն Պատվիրատուի կողմից Ընկերությանը ուղարկված պայմանագրի նախագծով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները, այսինքն տեղի է ունեցել գնման առարկայի տեխնիկական բնութագրի փոփոխություն: Ընկերության ներկայացուցիչը եզրակացրեց, որ գնման ժամանակացույցում փոփոխություն կատարելը համարել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված պահանջի խախտում, հետևաբար պայմանագրի կնքումը անընդունելի են համարել և հրաժարվել են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

• 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

• 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

• 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումն, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

• 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

• 9.2 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.28 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն հրավերի 1-ին մասի 7.28 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

• 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: :

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38 ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 6կգ. ավտոմատ) ապրանքատեսակի մատակարարման համար ժամկետ է սահմանված եղել 100 հատ հուլիս ամսում և 150 հատ օգոստոս ամսում, իսկ լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 10կգ. ավտոմատ) ապրանքատեսակի մատակարարման համար 100 հատ հուլիս ամսում և 100 հատ օգոստոս ամսում:

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 25.07.2018թ. armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «Ավանգարդ» ՍՊԸ-ին ներկայացված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38-1 ծածկագրով պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 6կգ. ավտոմատ) ապրանքատեսակի մատակարարման համար ժամկետը սահմանված է եղել՝ 250 հատ օգոստոս ամսում, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 10կգ. ավտոմատ) ապրանքատեսակի համար՝ 200 հատ օգոստոս ամսում:

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 14.08.2018թ. armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով «Ավանգարդ» ՍՊԸ-ին ներկայացված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/38-1 ծածկագրով պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված գնման ժամանակացույցով՝ լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 6կգ. ավտոմատ) ապրանքատեսակի մատակարարման համար ժամկետը սահմանված է եղել՝ 250 հատ սեպտեմբեր ամսում, լվացքի մեքենա (արտադրողական չորացումով 10կգ. ավտոմատ) ապրանքատեսակի համար՝ 200 հատ հոկտեմբեր ամսում:

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 25.07.2018թ. և 14.08.2018թ. «Ավանգարդ» ՍՊԸ-ին ներկայացված պայմանագրերի նախագծերում կատարվել են մատակարարման ենթակա ապրանքների գնման ժամանակացույցերի փոփոխություն:

- «Ավանգարդ» ՍՊԸ-ն 31.07.2018թ. և 15.08.2018թ. գրություններով հրաժարվել է պայմանագիրը կնքելու առաջարկներից:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուն՝ պայմանագրի նախագծում գնման ժամանակցույցի փոփոխություն կատարելով, խախտել է Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ այն հանգեցրել է գնման առարկայի բնութագրի փոփոխմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.11.2018թ. թիվ 27/26-3/20057-18 գրությամբ «Ավանգարդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ